

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԺՆԵՎՈՒՄ

Սույն թվականի հունվարի 16—26 օրերին Շվեյցարիայի Ժնև քաղաքում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական կոմիտեի հերթական նստաշրջանը:

Կենտրոնական կոմիտեն այս տարվա իր նստաշրջանը պատշաճեցրել էր «Քրիստոնյաների միության համար աղոթքի շաբաթ»-ի օրերին (հունվարի 18—25-ը): Բնականաբար այսպիսով մասնավոր իմաստ էր տրվում ներկա նստաշրջանի պաշտամունքային կյանքին:

Հունվարի 16-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 8.30-ին, ԵՀԽ-ի կենտրոնում գտնվող մատուռի մեջ հատուկ արարողությամբ տեղի ունեցավ ժողովի հանդիսավոր բացումը: Այս առթիվ քարոզեց ԵՀԽ-ի պատվո նախագահ Յոհաննես Հեմպել եպիսկոպոսը՝ Արևելյան Գերմանիայից:

Նույն օրը, ընդհանուր ժողովի բացման արարողությունն ավարտվելուց հետո, զեկուցումով հանդես եկավ ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի ատենապետ դր. Հայնց Յոհակիմ Հելտը՝ իր խոսքում անդրադառնալով ԵՀԽ-ի կատարած աշխատանքներին և ապագա ծրագրերին: Նա խոսեց 1990 թվականին կայանալիք համաշխարհային համագումարի մասին, որը նվիրվելու է խաղաղության, արդարության, իրավունքի և մարդկային բարոյականության հարցերին: Ապա անդրադառնալով քրիստոնեական Եկեղեցիների միության հարցին՝ նա ասաց. «Առաջին անգամ լինելով մենք արևմտյան աշխարհում անդրադարձանք մեր մշակույթի ունեցած տարբեր ազդեցություններին, քրիստոնեության և աստվածաբանության վրա»... «Ի՞նչ է նշանակում սա էկումենիկ շարժման տարածքում, հակառակ նրան, որ բոլորս էլ ունենք մեկ և նույն Ավետարանը և նույն հավատամքը Հիսուս Քրիստոսի նկատմամբ որպես Աստված և Փրկիչ, այնուամենայնիվ, քանի որ տարբեր մշակույթներից ենք գալիս, այդ պատճառով էլ քրիստոնեական Եկեղեցիներն ապրում են տարբեր պայմաններում»:

Հաջորդ զեկուցողն էր ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դր. Էմիլիո Կաստրոն: Հարգելի զեկուցողը անդրադարձավ Կենտրոնական կոմիտեի՝ Բուենոս Այրեսում կայացած նստաշրջանից ի վեր ԵՀԽ-ի բոլոր օղակների գործունեությանը, նրանց հաջողություններին և դժվարություններին: Գլխավոր քարտուղարը փորձեց նոր ուղի գտնել առաջիկա տարիների ԵՀԽ-ի գործունեության համար մինչև հաջորդ համագումարը, որը տեղի է ունենալու 1991 թվականին Ավստրալիայի մայրաքաղաք Կանբերայում: Եկեղեցիների միության հարցին անդրադառնալով՝ գլխավոր քարտուղարը նշեց հետևյալը. «Այս օրերին հաճախ ասվում է, որ մենք ունենք «իսկական, սակայն սահմանափակ, ոչ ամբողջական հաղորդություն» ... «Ինչի՞ վրա պետք է դնենք շեշտը այս բանաձևման մեջ: Ես ուզում եմ դնել **իսկական հաղորդություն** բառերի վրա, որովհետև մինչև լրումն ժամանակաց մեր հաղորդությունը ամբողջական չի լինելու: Կա՞ արդյոք «ամբողջական» հաղորդություն նույնիսկ մեր դավանակից Եկեղեցիների կամ առանձին տեղական Եկեղեցիների միջև»:

Ժողովի հաջորդ օրերին աշխատանքային առանձին-առանձին խմբերում քննարկ-

վեցին ատենապետի և գլխավոր քարտուղարի զեկուցումները:

Նստաշրջանի երկրորդ օրվա լիագումար նիստում Շվեյցարիայի Եկեղեցիների մասին զեկուցումներով հանդես եկան. տեղական քրիստոնեական Եկեղեցիների ներկայացուցիչները՝ ծանոթություններ տալով իրենց Եկեղեցիների և այդ Եկեղեցիների առաջ դրված մտահոգությունների ու նպատակների մասին:

Կիրակի օրը, հունվարի 18-ին, Կենտրոնական կոմիտեի նստաշրջանի մասնակիցները խումբ-խումբ այցելեցին Շվեյցարիայի եկեղեցիները: Այս առթիվ Ժենևի հայոց Ս. Հակոբ եկեղեցում պատարագեց տեղի հոգևոր հովիվ Տ. Վազգեն վարդապետ Այքազյանը և քարոզեց Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը «Ողորմութիւն և ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն և խաղաղութիւն համբուրեսցին» բնաբանով: Սուրբ պատարագի ավարտին ԵՀԽ-ի կողմից հայոց եկեղեցի այցելող բոլոր հյուրերը հրավիրվեցին դոկտ. Սեթյանի բնակարանը՝ ճաշի:

Նույն օրը, երեկոյան ժամը 18-ին, Կենտրոնական կոմիտեի ժողովի բոլոր մասնակիցները հրավիրվել էին էկումենիկ արարողությանը, որը տեղի ունեցավ Ժենևի Ս. Պետրոս Մայր տաճարում: Սույն էկումենիկ աղոթքը կազմակերպել էին Ժենևի քրիստոնեական Եկեղեցիներն ու համայնքները: Արարողության ընթացքում քարոզեց Անտիոքի և Արևելքի Նորին Ամենապատվություն Տ. Իգնատիոս Դ Պատրիարքը, որը ԵՀԽ-ի նախագահներից մեկն է:

Նստաշրջանի օրերին էկումենիկ երիտասարդական շարժմանը նվիրված մի հաղորդում տեղի ունեցավ, որի ընթացքում առաջարկություններ եղան երիտասարդության ձայնը ավելի լսելի դարձնելու և ԵՀԽ-ի կազմում ավելի մեծ թվով երիտասարդներ ընդգրկելու մասին:

Նստաշրջանի մասնակիցներին մեծ չափով զբաղեցրեց նաև ԵՀԽ-ի հետ հաղորդակցվելու, ինչպես նաև անդամ Եկեղեցիների միջև սերտ հաղորդակցություն հաստատելու անհրաժեշտության հարցը:

Հետևյալ օրերին ժողովականները նախօրոք պատրաստված ցուցակների համաձայն, բաժանվեցին առանձին խմբերի՝ ըստ միավորների (unit), քննարկելու համար յուրաքանչյուր միավորի գործունեության հետ կապված հարցերը: Առաջին խումբը զբաղվեց «Հավատի և վկայության» հարցերով՝ իր հերթին բաժանված լինելով «Հավատ և կարգ», «Երկխոսություն կենդանի կրոնների հետևող ժողովուրդների հետ», «Առաքելություն և ավետարանչություն», «Եկեղեցի և հասարակություն» ստորաբաժանումների: Երկրորդ խումբը, որը մտնում էր «Արդարություն և ծառայություն» միավորի մեջ, զբաղվեց «Միջեկեղեցական փոխօգնություն», «Եկեղեցիների մասնակցությունը առաջադիմությանը», «Միջազգային գործեր», «Պայքար ցեղային խտրականության դեմ», «Քրիստոնեական բուժական հանձնախումբ», «Արդարության, խաղաղության և ստեղծագործության իրավունքներ» և այլ հարցերով: Երրորդ խումբը, որը մտնում էր «Կրթություն և վերանորոգում» միավորի մեջ, զբաղվեց «Կինը եկեղեցում և հասարակության մեջ», «Վերանորոգում և համայնքային կյանք», «Երիտասարդություն», «Կրթություն», «Աստվածաբանական կրթություն» և այլ հարցերով: Քննարկվող հաջորդ հարցերը վերաբերվում էին «Բոսսեյի էկումենիկ ինստիտուտին» և գլխավոր քարտուղարության առանձին բաժիններին:

Կենտրոնական կոմիտեի սույն նստաշրջանի առաջ դրված գլխավոր հարցը 1991 թվականին Ավստրալիայի Կանբերա մայրաքաղաքում կայանալիք համագումարի, ինչպես նաև այդ ուղղությամբ առաջիկա տարիների ընթացքում տարվելիք նախապատրաստական աշխատանքների ծրագրավորման հարցն էր:

Կենտրոնական կոմիտեն իր նստաշրջանում, ի շարս ընդունված այլ որոշումների, որոշեց նաև, որ հատուկ դիմում կատարվի Սովետական Միության կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովին՝ առաջարկելով, որ միջուկային զենքերի փորձարկման մորատորիումի թվականը երկարաձգվի, որպեսզի ԱՄՆ-ի նախագահ Ռ. Ռեյգանը նկատի ունենալով այդ՝ անդրադառնա և համաձայնվի Սովետական Միության առաջարկին՝ աշխարհը դարձնելու միջուկային վտանգից զերծ մի գոտի:

Նստաշրջանում որոշում ընդունվեց նաև, որ ԵՀԽ-ն իր ներկայացուցիչներով պաշտոնապես մասնակցի Ռուս Պրավոսլավ Եկեղեցու հիմնադրման հազարամյակի տոնակատարություններին:

ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի վերոհիշյալ նստաշրջանին, իբրև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներկայացուցիչներ Կենտրոնական կոմիտեում, մասնակցեցին Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը և Շվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Վիգեն վարդապետ Այքազյանը:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊՈԶԱՊԱԼՅԱՆ